Հաստատում եմ՝

Դիլիջան համայնքի ղեկավար
Դավիթ Սարգսյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

հ/հ	**Առաջարկի անվանումը**	**Առաջարկի բովանդակությունը (ներառյալ բյուջեն)**	**Առաջարկի կարգավիճակը** • *Ընդունվել է* • *Մերժվել է*	**Մերժման դեպքում՝ հիմնավորումը**
1.	Կալինինի 1-ին նրբանցքի ճանապարհի ասֆալտապատում	Առաջարկում եմ կատարել Կալինինի 1 ին նրբանցքի բարեկարգում և ասֆալտապատում: Նրբանցքը չի ասֆալտապատվել անհիշելի ժամանակներից, առաջացած փոսերը, հաճախակի անհարմարություններ են առաջացնում բնակիչների համար: Մի քանի անգամ բնակիչների միասնական միջոցներով կատարվել են խոր փոսերի տեղային բետոնապատում, սակայն ընդհանուր ճանապարհը հնարավոր չի նման	Մերժվել է	Առաջարկի բյուջեն գերազանցում է ավագանու հատկացրած սահմանաչափը, ինչպես նաև առաջարկը ներառված է համայնքի 2022-2027 թթ. հնգամյա զարգացման ծրագրում:

		աշխատանքներով վերակառուցել:		
2.	Հովք գյուղի համայնքային կարիքների բավարարման համար հանդիսությունների սրահի կառուցում	Հովք գյուղը, լինելով փոքր համայնք, կանգնած է բազմաթիվ սոցիալական և տնտեսական դժվարությունների առաջ: Բնակչության մեծ մասը ապրում է ֆինանսական դժվարություններով, և գյուղում չկա համապատասխան վայր, որտեղ կարելի է կազմակերպել համայնքային միջոցառումներ՝ անկախ առիթի բնույթից: Հովք գյուղում հանդիսությունների սրահի կառուցումը կդառնա բնակիչների սոցիալական կյանքի կարևոր հենակետ և մատչելի լուծում՝ նվազեցնելով գյուղացիների ֆինանսական ծանրաբեռնվածությունը, որն առաջանում է միջոցառումները այլ համայնքներում կազմակերպելու անհրաժեշտության պատճառով: Այն կլինի հասանելի և օգտակար յուրաքանչյուր գյուղացու համար: Գյուղն ունի համայնքային կարիքների համար նախատեսված տարածք, որը կարող է ծառայել որպես հիմք նոր համայնքային	Մերժվել է	Առաջարկի բյուջեն գերազանցում է ավագանու հատկացրած սահմանաչափը, ինչպես նաև առաջարկի իրականացումը բավականին ժամանակատար է:

		սրահի կառուցմանը: Այս խնդիրը լուծելով՝ Հովք գյուղի յուրաքանչյուր բնակիչ ավելի մեծ հույս ու հավատ կունենա իր համայնքի նկատմամբ և, գուցե, ավելի քիչ կմտածի գյուղը լքելու մասին: Այն կդառնա վայր, որտեղ կկազմակերպվեն համատեղ միջոցառումներ՝ համայնքի անդամների միջև ստեղծելով ուժեղ կապ, խթանելով միմյանց աջակցությունը և նոր հնարավորություններ բացելով գյուղի ապագայի համար:		
3.	Խաչարձան գյուղի հետիոտնային կամրջի կառուցում	Խաչարձան բնակավայրում երկու թաղամասերը իրար միացնող կամուրջը կառուցվել է դեռևս 1970-ական թվականներին և այժմ գտնվում է վթարային վիճակում: Կամուրջը երկու թաղամասերը իրար միացնող ամենակարճ ճանապարհն է և գտնվում է բնակչության տեղաբաշխման խիտ հատվածում: Վթարված լինելու պատճառով այն խոչընդոտում է մարդկանց ազատ տեղաշարժը, այն հատկապես վտանգավոր է դպրոցական և	Ընդունվել է	

		նախադպրոցական տարիքի երեխաների համար այդ պատճառով էլ դպրոց և մանկապարտեզ հաճախող երեխաները ստիպված ավելի երկար ճանապարհ են անցում: Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք երկու թաղամասերը իրար միացնող բարեկարգ և անվտանգ կամուրջ, կապահովվի մարդկանց ազատ տեղաշարժը մի թաղամասից մյուս թաղամաս:		
4.	Խաչարձան գյուղում նոր աղբամանների տեղադրում	Աղբահանությունը Խաչարձան գյուղում իրականացվում է 2017 թվականից, ներկայումս տեղադրված 20 աղբամանները ժամանակի ընթացքում ֆիզիկապես մաշվել են դրանց մաշվածության և կափարիչների բացակայության պատճառով կուտակված աղբը թափվում է դուրս և աղտոտում շրջակա միջավայրը: Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք նոր աղբամաններ, որը կնապաստի աղբահանության արդյունավետ իրականացմանը, կունենանք մաքուր և գեղեցիկ համայնք:	Մերժվել է	Առաջարկի գաղափարը նոր չէ:

5.	Կրթա-մշակութային կենտրոն Հովք բնակավայրում	Վերջին տարիներին համագործակցության հնարավորություն ունենալով Դիլիջան խոշորացված համայնքի Հովք բնակավայրում, նկատել եմ, որ բնակավայրում չկա կրթա-մշակութային հաստատություն, որը կարող է կրթական, մշակութային, համայնքային ու այ տեսակի հավաքների ու միջոցառումների հարթակ հանդիսանա համայնքի բնակիչների համար: Համայնքում գործում է դպրոց, որն իր շենքային ու գույքային պայմաններով աչքի չի ընկնում, և այս պահին վերոհիշյալ դերը մասսամբ դպրոցն է կատարում: Դպրոցն ինքնին ունի վերազինման ու զորեղացման կարիք: Ուստի ժամանակակից հետաքրքիր շինարարական լուծումներով, օրինակ կոնտեյներներիով, կառուցել կրթա-մշակութային հարմարավետ կենտրոն, որը հագեցած կլինի բազային անհրաժեշտ գույքով ու տեխնիկայով, գրականությամբ, որտեղ համայնքի բնակիչները կարող են հավաքվել ու	Մերժվել է	Առաջարկի բյուջեն գերազանցում է ավագանու հատկացրած սահմանաչափը, ինչպես նաև առաջարկի իրականացումն բավականին ժամանակատար է:

		կազմակերպել ամենատարբեր միջոցառումներ: Կրթա-մշակութային կենտրոնի հարակից տարածքում համայնքի երիտասարդները կարող են հիմնել հետաքրքիր այգի, զբաղվել գյուղատնտեսական գործունեությամբ, ու նույնիսկ բերք ստանալ: Դիլիջան համայնքում գործող կրթական, համայնքային ու մշակութային կառույցների հետ համագործակցությամբ բնակավայրում հնարավոր է իրականացնել պարբերաբար միջոցառումներ:		
6.	Ճանապարհի երթևեկելի մասի վերանորոգում	Առաջարկում եմ վերանորոգել Շահումյան փողոցից դեպի թիվ 8, 10, 12 բազմաբնակարան շենքեր տանող երթևեկելի ճանապարհահատվածը, որը գտնվում է շատ վատ գրունտային վիճակում: Ճանապարհը երբևէ չի վերանորգվել, ու տասնամյակների ընթացքում դարձել է լրիվ գյուղական գրունտային ճանապարհ: Բնակիչների ջանքերով երբեմն տարբեր տեսակի շեբին կամ	Մերժվել է	Առաջարկն ներառված է համայնքի 2022-2027 թթ. հնգամյա զարգացման ծրագրում:

		ասֆալտային մնացորդներ են բերվում ու լցվում փոսային հատվածներում, բայց խնդրիը դեռ մնում է չլուծված: Կանխավ շնորհակալությունԼ		
7.	Հաղարծին բնակավայրի թաղամասերի գիշերային լուսավորություն	ԽՆԴԻՐԸ: Հաղարծին բնակավայրի թաղամասերում չի ապահովվում գիշերային լուսավորությունը, ինչի պատճառով առաջանում են մի շարք խնդիրներ՝ մութ փողոցներով տուն գնալը վտանգավոր է, քանի որ փողոցներում թափառող շներ կան, խնդիրը հատկապես արդիական է ձմռան ամիսներին, երբ բոլոր դժվարություններին ավելանում է նաեւ սառած ճանապարհներն ու սառցապատ մայթերը . մթության պայմաններում հաղթահարելու գործընթացը: Լուսավորության բացակայությունը խանգարում է նաև տուրիզմի զարգացմանը: Զբոսարջիկների այցը գյուղում գիշերային ժամերին նվազում է: ՆՊԱՏԱԿԸ: Հաղարծին բնակավայրի թաղամասեր երթևեկությունն ու տեղաշարժը	Մերժվել է	Առաջարկն ներառված է ինչպես համայնքի 2025-2027 թթ. ՄԺԾԾ-ում, ինչպես նաև համայնքի 2022-2027 թթ. հնգամյա զարգացման ծրագրում::

		դարձնել անվտանգ և հարմարավետ:		
8.	Մշակութային կենտրոնի և մեծահասակների ժամանցի սենյակի հիմնանորոգում	Այս ծրագրով առաջարկում եմ Շամախյան 12/1 հասցեում գտնվող կենտրոնի վերանորոգում: Տարածքը շուրջ 150քմ է, բաղկացած 3 սենյակից, որոնք ծառայում են, որպես համայնքային գրադարան, մեծահասկների և ծերերի ժամանցի սենյակ և հանդիսությունների սրահ: Շինությունը երկար տարիներ չի վերանորոգվել և գտնվում է անմխիթար վիճակում: Վերանորոգում կատարելուց և տեխնիկական հագեցվածությունից հետո հնարավոր կլինի սենյակներն օգտագործել նաև թաղամասի դպրոցահասակների և երիտասարդների համար, որպես դասընթացների սենյակ, գրադրանում կազմակերպել գրական ցերեկույթներ և այլ միջոցառումներ, մեծահասկների շրջանում իրականացնել մրցաշարեր՝ շաշկի, շախմատ և այլ խաղեր: Վերոնշյալ հաստատությունը շատ մեծ նշանակություն ունի տվյալ	Ընդունվել է	

		հատվածի մի քանի թաղամասերի բնակիչների համար, քանի որ բազմագործառութային շինություն է և իր գործունեությամբ ծառայում է տարբեր տարիքային խմբերին: Առաջարկվող ծրագիրը միտված է մշակութային և կրթական կենտրոնի պայմանների բարելավմանը:		
9.	ԲԱՋՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԽԱՂԱԴԱՇՏԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ	Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գետափնյա 74 շենքի հարակից տարածքում խաղադաշտի կառուցում: Խաղադաշտի կառուցումը կարևոր նշանակություն ունի թաղամասի բնակիչների համար, քանի որ այնտեղ են իրենց ժամանցը անցկացնում թաղամասի բազմաթիվ բնակիչներ: Նշենք, որ այդ տարածքում նախքինում արդեն եղել է խաղադաշտ, որը գործել է դեռևս 1990-ական թվականներին, սակայն ներկայումս խաղադաշտը վերածվել է չօգտագործվող տարածքի: Ֆուտբոլի, վոլեյբոլի և բասկետբոլի համար նախատեսված խաղադաշտի	Ընդունվել է	

		կառուցումը կարևոր ներդրում կլինի համայնքի զարգացման գործում՝ ինչը կնպաստի առողջ ապրելակերպի զարգացմանը և համայնքային ակտիվության մեծացմանը: Կհավասարակշռվի համայնքում ակտիվ կյանքի և ժամանցի հնարավորությունների պակասը, կավելանա համայնքի երիտասարդների զբաղվածությունը: Ծրագրի նպատակն է Ֆուտբոլի, վոլեյբոլի և բասկետբոլի համար նախատեսված բազմաֆունկցիոնալ խաղադաշտի կառուցումը , երիտասարդների ֆիզիկական զարգացման և թիմային աշխատանքի խթանումը, համայնքում առողջ ապրելակերպի և մշակույթի ձևավորումը: Առաջարկվում է կառուցել 1 նոր խաղադաշտ, որը նախատեսված կլինի ֆուտբոլի, վոլեյբոլի և բասկետբոլի համար: Ծրագրի արդյունքներից կօգտվեն համայնքի ավելի քան 800 բնակիչ: Հավելեմ, որ կմեծանա համայնքի		

		ներգրավվածությունը մարզական գործընթացներին:		
10.	Զբոսաշրջային և մշակութային կենտրոնի ստեղծում	2017 թվականից համայնքում գործում է՝ «Դիլի Տուր Ինֆո» զբոսաշրջային-մշակութային և տեղեկատվական բլոգը, որը իր գործունեությամբ առաջինն է Դիլիջանի տարածաշրջանում: Այն մոտիվացնում է զբոսաշրջությունը, մշակույթը և տեղեկատվությունը մեկ հարթակում: Բլոգը ունի 6 ուղղություններ, հստակեցված նպատակ, սկզբունքներ, որդեգրված առաքելություն, իրականացված ՍՈՏ վերլուծություն, սահիկաշար, անվանանշան, ծառայությունների մասին պատմող թռուցիկներ: Մասնակցային բյուջետավորում – 2025 թվականի ծրագրով ցանկանում ենք բազմաբնակավայր և խոշորացված Դիլիջան համայնքում ստեղծել զբոսաշրջային-մշակութային և տեղեկատվական կենտրոն, որը կնպաստի համայնքի զբոսաշրջային և մշակութային կյանքի արդյունավետ և	Մերժվել է	Առաջարկն մերժվել է, քանի որ իրանից ներկայացնում է որպես բիզնես գաղափար, բացի այդ պարզ չէ թե որտեղ է այն իրականացվելու, ինչպես նաև վերջինիս պահպանման ծախսերը հիմնավորման կարիքն ունեն:

		համաչափ զարգացմանը: Համայնքում 90 թվականներից հետո չկա նմանատիպ կենտրոն, որը համայնք այցելող հյուրերին կտրամադրի խորհրդատվություն, կկատարի ամրագրում հյուրատներ, բացօթյա տաղավարներ, կկազմակերպի էքսկուրսիաներ, կառաջարկի զբոսաշրջային փաթեթներ, կզբաղվի ներգնա տուրերով: Ստեղծելով այս կենտրոնը համայնք այցելող հյուրերը կկարողանան ձեռք բերել զբոսաշրջային փաթեթներ, կատարել ամրագրումներ իրենց նախընտրած հյուրատուն, հյուրանոց, բացօթյա տաղավար, հարմարավետ մեքենաներով շրջել համայնքում, բացահայտել համայնքի թաքնված վայրերը, ստանալ գրագետ և համապարփակ խորհրդատվություն, տեղեկանալ համայնքային իրադարձությունների, տրանսպորտի ժամանակացույցի մասին և պատվիրել իրենց նախընտրած ուղղությունները, հարմարավետ		

		մեքենաներով, բարեկիրթ վարորդների ընկերակցությամբ, մատչելի գներով: Կենտրոնում կկազմակերպվեն զբոսաշրջության և մշակույթի թեմաներով հանդիպումներ, կլոր սեղաններ, դասընթացներ, որոնք կնպաստեն համայնքի բնակչության հմտությունների, գիտելիքների, կարողությունների հզորացմանը սպասարկման և հյուրընկալության ոլորտում: Կբարելավի սպասարկման որակը: Կկազմակերպենք վարպետաց դասեր, փառատոններ, միջոցառումներ, որտեղ համայնքի նկարիչը, արվեստագետը կկարողանա ներկայացնել իր աշխատանքները: Կենտրոնում կգործեն նաև այլ խմբակներ, որը կլուծի համայնքի բնակիչների ժամանցի, հանգստի հարցը աշխատանքից հետո:		